

ԱՆՆԱ ԴԱՆԻԲԵԿՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի
իրավունքի և քաղաքականության ինստիտուտի
քրեական և քրեական դատավարության իրավունքի
ամբիոնի հայցորդ



ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՇԱՌՔԻ ՕԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՏԿԱՆԻՇ

Առևտրային կաշառքի հանցակազմը նորա-
մուծություն է հանդիսանում ետխորհրդային քրեա-
կան իրավունքում: Վերոհիշյալ հանցակազմը նա-
խատեսող նորմը (ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվ.) ընդգր-
կում է երկու փոխկապակցված արարք՝ առևտրա-
յին կամ այլ կազմակերպության ծառայողին, ար-
բիտրին, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ ար-
բիտրաժի մասին օրենսդրությանը համապա-
տասխան գործառույթներ իրականացնող արբիտ-
րին, աուդիտորին կամ փաստաբանին կաշառք
տալը (200-րդ հոդվ. 1-ին մաս), ինչպես նաև նշված
սուբյեկտների կողմից կաշառք ստանալը (200-րդ
հոդվ. 3-րդ մաս):

ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 1-ին մասով
նախատեսված արարքը օբյեկտիվ կողմից բնու-
թագրվում է որպես վերը նշված անձանց ապօրի-
նաբար անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց
կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատ-
մամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավե-
լություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրա-
մադրելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած
անձի օգտին գործողություններ կատարելու կամ
չկատարելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասով
նախատեսված արարքի օբյեկտիվ կողմը, համա-
պատասխանաբար, արտահայտվում է վերոհիշյալ
սուբյեկտների կողմից օրենքում թվարկված նյու-
թական արժեքները և այլ օգուտները նույն պայ-
մաններով ապօրինաբար ստանալու կամ պահան-
ջելու կամ ստանալու խոստումը կամ առաջարկն
ընդունելու մեջ:

Առևտրային կաշառքի օբյեկտիվ կողմի հա-
մար հատկանշական է դրամ, գույք կամ այլ օգուտ-
ներ տալու կամ ստանալու ապօրինի բնույթը, այ-
սինքն՝ ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածով նախատես-
ված արարքի հանցակազմը առկա է այն դեպքում,
երբ գույքային բնույթի այս կամ այն բարիքը տր-
վում կամ ստացվում է ապօրինաբար: Ապօրինու-
թյունը կայանում է նրանում, որ ծառայողի մոտ առ-
կա չէ այդպիսի վարձատրություն (նյութական բո-
վանդակությամբ օգուտ) ստանալու որևէ իրավա-
կան հիմք, այսինքն՝ դա չի բխում օրենքի, ենթաօ-

րենսդրական ակտերի, կազմակերպության հիմնա-
դիր փաստաթղթերի, ներքին ակտերի, քաղաքացի-
աիրավական կամ աշխատանքային պայմանագրի
դրույթներից: Դա նշանակում է, որ այդպիսի օգուտ
ստանալը ուղղակիորեն արգելված է իրավական
ակտով կամ պայմանագրով, կամ ուղղակի արգելք
սահմանված չլինելու պայմաններում ուղղակի նա-
խատեսված չէ և չի բխում օրենքի կամ այլ իրավա-
կան ակտի մեկնաբանությունից, կամ հակասում է
տվյալ կազմակերպության գործունեության իրա-
կանացման կարգին, սկզբունքներին և նպատակ-
ներին: Այսինքն՝ նյութական օգուտ տրամադրելը
(ստանալը) ապօրինի բնույթ է կրում այն բոլոր
դեպքերում, երբ այն ստանալու հնարավորությունը
ամրագրված չէ օրենքում կամ այլ իրավական ակ-
տում կամ նախատեսված չէ պայմանագրի պայ-
մաններով: Նկատի ունենալով հանրային ծառա-
յության համակարգում չընդգրկված կազմակեր-
պությունների և որոշակի մասնագիտական գործա-
ռույթներ իրականացնող անձանց իրավական վի-
ճակը և վերջիններիս գործունեության իրավական
կարգավորման յուրահատկությունը, որով դրանք
տարբերվում են հանրային ծառայողներից, տվյալ
դեպքում վարձատրության օրինականության հար-
ցը լուծվում է ոչ այդքան միանշանակ, ինչպես հան-
րային ծառայողների դեպքում: Այսպես, եթե հան-
րային ծառայության մեջ գտնվող անձանց համար
օրենքով իմպերատիվ սահմանվում են արգելքներ և
սահմանափակումներ՝ կապված ծառայողական
պարտականությունների առնչությամբ այլ անձան-
ցից նվերներ, գումարներ կամ ծառայություններ,
ինչպես նաև ծառայողական պարտականություննե-
րի կատարումից բխող հրապարակումների կամ
ելույթների համար հոնորար ստանալու հետ, ապա
հանրային ծառայող չհանդիսացող անձանց գոր-
ծունեության իրավաչափ վարձատրության աղբ-
յուրները կարող են լինել նաև ծառայողական գոր-
ծառույթների իրականացման համար այլ անձան-
ցից ստացված միջոցները: Օրինակ՝ առևտրային
կազմակերպության ներքին իրավական ակտով
կամ դրա ծառայողի հետ կնքված աշխատանքա-

www.lawinstitute.am

յին պայմանագրով նախատեսվում է վարձատրություն ստանալու իրավունք՝ տվյալ աշխատողի աջակցությամբ կատարված գործարքի արժեքի որոշակի տոկոսի չափով, արբիտրաժային տրիբունալի ռեզյամենտով սահմանված կարգով վեճը քննելու և լուծելու համար կողմերից գանձվում է որոշակի վճար, և դրանից գոյացած միջոցների հաշվին ապահովվում արբիտրների վարձատրությունը, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող աուդիտորը կամ փաստաբանը իրենց մասնագիտական պարտականությունների կատարման համար անձի հետ կնքված պայմանագրի հիման վրա վերջինից ստանում են որոշակի վճար: Այդպիսի վարձատրությունը իրավաչափ համարելու համար պետք է պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք այն ստանալը հիմնված է օրենքի, այլ իրավական ակտի կամ դրանց համապատասխան կնքված պայմանագրի վրա և չի հակասում որևէ իրավական նորմի պահանջներին կամ տվյալ կազմակերպության (ինստիտուտի) գործունեության սկզբունքներին և խնդիրներին: Այսպես, փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու համար վճար ընդունելը վստահորդի հետ կնքված պայմանագրի հիման վրա օրինական է, քանի որ դա բխում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներից: Սակայն եթե հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող փաստաբանը իրավաբանական օգնություն ցույց տալու համար փոխհատուցում ստանա հանրային պաշտպանության իրավունք ունեցող անձից, ում օրենքի ուժով իրավաբանական օգնությունը պետք է ցույց տրվի անվճար, ապա այդպիսի վարձատրությունը միանշանակ ապօրինի է: Նույնը վերաբերում է նաև արբիտրաժային վեճը քննող արբիտրին, որը գործին մասնակցող անձից գումար կամ նվեր է ստանում՝ նրա օգտին գործը լուծելու համար, ինչպես նաև բաժնետիրական ընկերության բաժնետերերի կամ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հետ կնքված պայմանագրի հիման վրա տվյալ կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում իրականացնող և այդ պայմանագրով սահմանված կարգով վարձատրվող աուդիտորին, որը օրինական վարձատրությունից բացի ընկերության ղեկավարից կամ հիմնադրամի կառավարիչից ստանում է այս կամ այն գույքային օգուտ՝ նրա օգտին որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու համար:

Նկատի ունենալով ոչ հանրային հատվածի ծառայողների գործունեության բնույթը և դրա վարձատրման կարգը (մասնավորապես՝ խոսքը վերաբերում է իրենց հաճախորդներից ստացվող վարձատրության դիմաց մասնագիտական գործա-

ռույթների իրականացմանը), ապա տվյալ սուբյեկտների կողմից ստացվող վարձատրության իրավաչափ լինելու հարցի լուծումը գործնականում երբեմն կարող է կապված լինել որոշակի բարդությունների հետ: Հատկապես վերոգրյալը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող փաստաբաններին և աուդիտորներին: Հարկ է նշել, որ ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 3-րդ մասի նախկին խմբագրությամբ առևտրային կաշառք ստանալը նկարագրվում էր որպես դրա առարկան կազմող բարիքներ ստանալը՝ համապատասխան սուբյեկտների գրաված դիրքի հետ կապված՝ կաշառք տվողի, բացառությամբ իր հաճախորդի օգտին գործողություններ (անգործություն) կատարելու համար: Ընդ որում, կաշառք տալու դեպքում մնան վերապահում առկա չէր, որն անտրամաբանական էր: Միանշանակ, մնան օրենսդրական լուծումը ծայրահեղ անհաջող էր, քանի որ օրենսդիրը բոլոր դեպքերում բացառում էր տվյալ սուբյեկտի հաճախորդից ստացված գույքային օգուտի անիրավաչափ բնույթը՝ անկախ այն տրամադրելու իրավական հիմքերի առկայությունից: Այսպես, նշված օրենսդրական ձևակերպումից բխում էր, որ համապատասխան սուբյեկտի հաճախորդներից ստացված վարձատրությունը ցանկացած դեպքում պետք է դիտվի որպես օրինական՝ առանց դրա տրամադրման հիմքերին անդրադառնալու, իսկ ապօրինի բնույթ կարող է կրել բացառապես այդպիսին չհանդիսացող անձից ստացվածը: Անշուշտ, մնան մոտեցումը հիմնավոր չէր, քանի որ իր հաճախորդից վճար կամ այլ օգուտ ստանալը նույնպես կարող է լինել ապօրինի և համապատասխանել առևտրային կաշառքի հատկանիշներին, ինչպես երևում է բերված օրինակներից (մասնավորապես, խոսքը վերաբերում է հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող փաստաբանի կողմից առևտրային կաշառք ստանալու դեպքին): Միաժամանակ, չի բացառվում նաև, որ տվյալ սուբյեկտի հաճախորդ չհանդիսացող այլ անձի կողմից ստացվածը այդպիսին չհանդիսանա (օրինակ՝ մատուցված ծառայությունների համար հասանելիք վարձատրությունը հաճախորդի փոխարեն վճարվի երրորդ անձի կողմից):

Փաստորեն, տրամադրվող օգուտի իրավաչափությունը պայմանավորվում էր ոչ թե այն ստանալու իրավական հիմքերի առկայությամբ կամ բացակայությամբ, որպիսի հանգամանքը տվյալ դեպքում կրում է վճարող նշանակություն, այլ ստացողի կարգավիճակով, ինչը չի կարելի արդարացված համարել:

Ընդ որում, ինչ վերաբերվում է հաճախորդի կարգավիճակ ձեռք բերելուն, ապա այդ հարցի լու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ծուճը ևս միանշանակ չէ: Այսպես, ծառայությունների վճարովի մատուցումը կարգավորող քաղաքացիական օրենսգրքի դրույթների, ինչպես նաև մասնագիտական գործունեության այս կամ այն ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի (օրինակ՝ «Փաստաբանության մասին», «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքների) նորմերի պահանջներից բխում է, որ ծառայությունները պետք է մատուցվեն կողմերի միջև կնքված գրավոր պայմանագրի հիման վրա, հետևաբար տրամաբանական է ենթադրել, որ հաճախորդի կարգավիճակը ծագում է համապատասխան պայմանագիր կնքելիս: Մինչդեռ գործնականում հաճախակի լինում են դեպքեր, երբ որոշակի ծառայությունները մատուցվում են առանց գրավոր պայմանագրի կնքելու, թեև օրենքի ուժով դա համարվում է պարտադիր պայման: Մեր կարծիքով, առանց օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրի փաստացի մատուցվող ծառայությունների դիմաց վարձատրություն տրամադրելը կամ ստանալը սխալ կլիներ որակել որպես առևտրային կաշառք՝ հիմք ընդունելով միայն օրենքի վերոհիշյալ պայմանի չպահպանման հանգամանքը: Իհարկե, տվյալ դեպքում վարձատրությունը տրամադրվում է օրենքով սահմանված կարգի խախտմամբ, սակայն չի կարող համարվել ըստ էության ապօրինի, քանի որ իրավական նորմերի պահանջներից բխում է տվյալ տեսակի ծառայությունների մատուցման վճարովի բնույթը, ուստիև դրա դիմաց հատուցում ստանալու իրավունքը: Նման դեպքերում անձը կարող է ենթարկվել պատասխանատվության (այդ թվում՝ քրեական) այլ արարքի (օրինակ՝ հարկ վճարելուց խուսափելու, ապօրինի ձեռնարկատիրության), սակայն ոչ առևտրային կաշառքի համար: Նույնը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ կողմերի միջև կնքված պայմանագրում նշված վարձատրության գումարը չի համապատասխանում փաստացի ստացվածին:

Հետագայում վերոհիշյալ օրենսդրական ձևակերպումը փոփոխվել է և գործող խմբագրությամբ ՀՀ ԶՕ 200-րդ հոդվ. 3-րդ մասով նախատեսվող արարքի օբյեկտիվ կողմը նկարագրվում է որպես համապատասխան գույքային բնույթի օգուտները ապօրինաբար ստանալը: Շեշտելով ապօրինության հատկանիշը՝ օրենսդիրը հիմնավոր պայմանավորել է առևտրային կաշառքի հանցակազմի առկայությունը դրա առարկա հանդիսացող բարիքները ստանալու իրավական հիմքերի բացակայության հանգամանքով:

Նյութական բովանդակությամբ բարիք տրամադրելու (ստանալու) ապօրինությունը արտահայտվում է նաև նրանում, որ դա չի բխում այդ-

պիսի օգուտ տրամադրողի և այն ստացողի միջև առկա հարաբերությունների բնույթից և պայմանավորված է միայն վերջինիս կողմից կատարվող որոշակի գործողությամբ (անգործությամբ): Այսպես, կաշառքի առարկա չի կարող դիտվել նշված անձանց միջև մտերիմ ընկերական, այլ անձնական կամ ազգակցական հարաբերություններով պայմանավորված և այդ հարաբերությունների հիման վրա տրվող նվերը կամ անհատույց տրամադրվող այլ օգուտը, ինչպես նաև կողմերի միջև պարտավորական հարաբերությունների առկայության դեպքում ծառայողի հանդեպ ունեցած պարտքի մարման հաշվին իրեն հանձնվող որևէ նյութական արժեքը: Առևտրային կաշառքի հանցակազմի առկայության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ այդպիսի վարձատրությունը հանդես է գալիս որպես այն ստացողի որոշակի վարքագիծը պայմանավորող հանգամանք, որի տրամադրման նպատակն է ապահովել վերջինիս կողմից որոշակի գործողության կատարումը կամ չկատարումը այն պարագաներում, երբ այդպիսի գործողության կամ անգործության համար տվյալ իրադրությունում հատուցում ստանալը ուղղակիորեն արգելված է կամ չի բխում իրավական նորմերի պահանջներից:

Իրավաբանական գրականությունում վարձատրության ապօրինի բնույթը բնորոշվում է որպես աշխատանքային պայմանագրի (պայմանագրի) պայմաններով չնախատեսված¹, կամ երբ այդպիսի գործողությունները ուղղակիորեն արգելված են գործող նորմատիվ-իրավական ակտերով կամ հիմնադիր փաստաթղթերով կամ օրենքին համապատասխան չեն բխում կնքվող համաձայնագրի, մատուցվող ծառայության կամ անձի իրավաչափ գործունեության այլ տեսակի բնույթից կամ իրականացվում են գաղտնի կամ քողարկված են օրինական այլ գործողությունների կատարմամբ²: Կարծում ենք, որ նշված սահմանումները հարկ է լրացնել՝ վերոգրյալից բացի շեշտելով նաև այդպիսի օգուտ տրամադրելով (ստանալով) ծառայողի գործողությունների կամ անգործության պայմանավորված լինելու հանգամանքը, և հավելել, որ նյութական բովանդակությամբ օգուտ տալը (ստանալը) չի բխում այն տրամադրողի և ստացողի հարաբերությունների կամ տվյալ կազմակերպության և համապատասխան ծառայողի միջև իրավահարաբերությունների բնույթից: Ինչ վերաբերում է վարձատրության տրամադրման գաղտնի կամ քողարկված լինելու հատկանիշին, ապա գտնում ենք, որ դա վերաբերում է միայն գույքային օգուտ տրամադրելու եղանակին, այլ ոչ թե արտացոլում դրա ապօրինի բնույթը:

www.lawinstitute.am

Անդրադառնալով ապօրինի վարձատրությանը պայմանավորված գործողություններին (անգործությանը)՝ հարկ է շեշտել, որ առևտրային կաշառքի հանցակազմի առկայության համար նշանակություն չունի կաշառքով պայմանավորված գործողությունների փաստացի կատարված կամ չկատարված լինելու հանգամանքը: Այդ տեսակետից իրավացի է այն հեղինակների կարծիքը, ովքեր գտնում են, որ առևտրային կաշառքի համար կաշառք տվողին և ստացողին քրեական պատասխանատվության ենթարկելիս նշանակություն չունի նյութական բովանդակությամբ բարիքները տրամադրելու պահը՝ կաշառվող անձի կողմից կաշառատուի կամ այլ անձանց օգտին որոշակի գործողություններ (անգործություն) կատարելուց առաջ, թե դրանից հետո, սակայն անհրաժեշտ է, որ կաշառվողի կողմից նշված գործողություններ (անգործություն) կատարելու վերաբերյալ պայմանավորվածությունը կաշառք տվողի և ստացողի միջև ձեռք բերված լինի մինչև կաշառվողի կողմից կաշառատուի օգտին համապատասխան գործողություններ (անգործություն) կատարելը³: Նույն դիրքորոշումն է արտահայտել նաև ՌԴ Գերագույն դատարանի պլենումը «Կաշառակերության և առևտրային կաշառքի վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին» թիվ 6 առ 10.02.2000թ. որոշմամբ՝ պարզաբանելով, որ կաշառք կամ առևտրային կաշառք հանձնելու պահը (տվողի օգտին գործողություններ (անգործություն) կատարելուց առաջ թե հետո) չի ազդում կատարվածի որակման վրա⁴: Վերոգրյալի կապակցությամբ Ի. Ա. Պոպովը նշել է. «Կատարվածի որակման համար նշանակություն չունի, թե երբ են նյութական արժեքները կամ ծառայությունները հանձնվել կառավարչական գործառույթներն իրականացնող անձին՝ տվողի օգտին գործողություններ (անգործություն) կատարելուց առաջ⁵, թե՞ հետո: Սակայն ... վերջին դեպքում անհրաժեշտ է, որ նյութական վարձատրության վերաբերյալ պայմանավորվածությունը (համաձայնությունը) նախորդի սուբյեկտի գործողությանը (անգործությանը) և կանխորոշի այդ գործողության (անգործության) բնույթը⁶: Տվյալ տեսակետի համաձայն՝ նշված անձանց քրեական պատասխանատվության ենթարկելը բացառվում է նախապես չպայմանավորված կաշառքի առարկան՝ նյութական բարիքները կամ գույքային բնույթի ծառայությունները, ստանալու կամ տալու համար⁶, որպիսի մոտեցումը, կարծում ենք, հիմնավոր է: Այսպես, նկատի ունենալով, որ ծառայողին նյութական արժեքներ տալու կամ վերջինիս կողմից այն ստանալու ապօրինի բնույթը ենթադրում է, որ նրա որոշակի վարքագի-

ծը, այն է՝ կաշառատուի համար ցանկալի գործողությունը կամ անգործությունը պետք է պայմանավորված լինի կաշառքի առարկայով (արդեն իսկ ստացված կամ հետագայում ստացվելիք), ուստիև առանց ապօրինի վարձատրություն ակնկալելու կատարված կամ չկատարված որևէ գործողության համար որոշակի բարիք տրամադրելը կամ ստանալը, մեր համոզմամբ, չի կարող քրեական պատասխանատվություն առաջացնել: Տվյալ դեպքում ծառայողը իր մասնագիտական գործառույթներն իրականացնելիս գործում է օրենքի շրջանակներում և ղեկավարվում իրավական ակտերի և աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի դրույթներով, որպիսի վարքագիծը միանշանակ իրավաչափ է, քանի որ կախված չէ որևէ գույքային օգուտ ստանալու հանգամանքից: Այդ տեսակետից հիմնավոր ենք համարում Ա. Կ. Կվիցինիայի կարծիքը կաշառք ստանալու հանցակազմի օրենսդրական կատարելագործման վերաբերյալ, ըստ որի՝ հեղինակը առաջարկել է օրենքում ամրագրել կաշառք ստացող պաշտոնատար անձի վարքագծի՝ կաշառքով պայմանավորված լինելու հանգամանքը⁷: Դեռ ավելին, կարծում ենք, որ նման մոտեցումը արդարացված կլիներ տարածել ոչ միայն առևտրային կաշառք ստանալու, այլև այն տալու հանցակազմի վրա՝ նկատի ունենալով, որ ծառայողի կողմից որոշակի գործողություններ կատարելուց հետո վերջինիս նախապես չպայմանավորված նյութական վարձատրություն առաջարկելը կամ տրամադրելը նպատակ չի հետապնդում ազդեցություն գործելու նրա վարքագծի վրա և հակելու նրան այդպիսի վարձատրություն տվողի համար ցանկալի գործողություններ կատարելուն կամ կատարելուց զերծ մնալուն, ինչը, մեր համոզմամբ, տվյալ հանցագործության պարտադիր հատկանիշ է հանդիսանում: Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ նպատակահարմար կլիներ կատարել համապատասխան փոփոխություն ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում՝ «անձի օգտին» բառերից հետո ավելացնելով «կաշառքով պայմանավորված» արտահայտությունը:

Առևտրային կաշառքով պայմանավորված գործողությունների (անգործության) կապակցությամբ հարկ է նշել, որ դա օրենքում չի նկարագրվում: Վերոգրյալից բխում է, որ այդպիսի գործողությունը (անգործությունը) կարող է լինել ցանկացած բնույթի, այսինքն՝ իրավաչափ կամ ոչ իրավաչափ. այդ տեսակետը ընդունվում է հեղինակներից շատերի կողմից⁸: Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ՝ «Կազմակերպության կառավարչի գործողությունը կամ անգործությունը, որի համար նրան տրվում է ապօրինի վարձատրու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյուն, կարող է կայանալ առևտրային գաղտնիքը, առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպության (օրինակ՝ քաղաքական կուսակցության) որևէ գաղտնիք հրապարակելու, նախապատրաստվող կամ կնքված գործարքի, գործարար բանակցությունների, կողմերի մտադրությունների մասին հայտնելու մեջ և այլն: Արժեքները և գույքային բնույթի ծառայությունները կարող են հանձնվել գործարար համաձայնագրի կնքումը դրդելու կամ, ընդհակառակը, նրա համար, որ գործարքը չկայանա»: Մինչդեռ, որոշ քրեագետների կարծիքով, որպես այդպիսին կարող է դիտվել միայն կաշառվողի ոչ իրավաչափ վարքագիծը: Այսպես, Ի. Ա. Պուպովը գտնում է, որ «վարձատրություն ստանալը այնպիսի գործողությունների համար, որոնք ուղղված չեն վնաս պատճառելուն, օրինակ՝ փոխշահավետ գործարք կատարելու համար, չի պարունակում մեկնաբանվող հանցակազմի հատկանիշները»¹⁰:

Համամիտ չենք նշված կարծիքին, քանի որ բացառապես անիրավաչափ, վնասի պատճառմանն ուղղված գործողությունների դիմաց որոշակի օգուտներ տալը կամ ստանալը որպես հանցանք դիտարկելը անհիմն սահմանափակում և նեղացնում է առևտրային կաշառքի հասկացությունը, որը չի բխում օրենքի իմաստից: Գտնում ենք, որ առևտրային կաշառքով պայմանավորված գործողությունները կարող են կրել ոչ միայն ապօրինի, այլև իրավաչափ բնույթ. նման դեպքում կաշառքի առարկան հանդես է գալիս որպես օրինական գործողության (անգործության) կատարման ապօրինի պայման: Ինչ վերաբերում է կաշառքով պայմանավորված անիրավաչափ վարքագծին, ապա տրամաբանական է, որ եթե կաշառքի առարկան տրվում է որևէ այլ հանցագործության հատկանիշները պարունակող արարք կատարելու համար, կատարվածը պետք է որակվի հանցագործությունների հասկացությամբ:

Կաշառքը միշտ հանդես է գալիս որպես որոշակի անձի վրա ներգործելու ապօրինի հնարք, եղանակ, որը նպատակ է հետապնդում հասնել վերջինիս կողմից կաշառք տվողի համար ցանկալի վարքագծի: Այդպիսի վարքագիծը կարող է դրսևորվել ինչպես ծառայության գծով որոշակի գործողություններ կատարելով, այնպես էլ դրանք կատարելուց զերծ մնալով, եթե դա անհրաժեշտ էր կատարել օրենքին, այլ իրավական ակտերին, հիմնադիր և ներքին փաստաթղթերին կամ գործարար շրջանառության սովորույթներին համապատասխան: Ինչպես նշվել է, այդ գործողություններն, ըստ էության, կարող են իրավաչափ լինել, այսինքն՝ համապատասխանել օրենսդրությանը կամ տվյալ կազմակերպության գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերին: Օրինակ՝ որևէ գործարք կնքելը կամ այն կնքելուց հրաժարվելը, վարկ տրամադրելը, գույք վաճառելը, անձին աշխատանքի ընդունելը կամ այլ աշխատանքի տեղափոխելը, պաշտոնը բարձրացնելը և այլն: Հնարավոր է, որ այդ գործողությունների կամ անգործության դեպքում կազմակերպությունը նույնիսկ շահույթ կամ այլ օգուտ ստանա: Սակայն, հաշվի առնելով կաշառման փաստը, այդպիսի գործողությունները կատարելու կամ չկատարելու մասին որոշումը ընդունվում է սահմանված կարգին հակառակ՝ պայմանավորված լինելով ոչ թե ծառայողական անհրաժեշտությամբ, այլ ապօրինի վարձատրության հանգամանքով: Հաճախակի նման գործողությունները կամ անգործությունը նպատակահարմար չեն տվյալ կազմակերպության համար: Օրինակ՝ կազմակերպության ղեկավարը մեկ այլ կազմակերպության հետ պայմանագիր է կնքում, որով նախատեսվում է երկարատև համագործակցություն, և թեև այդ պայմանագրի կատարումը կազմակերպությանը շահույթ է բերում, սակայն այն ավելի փոքր է, քան կարող էր լինել այլ ընկերության հետ նմանատիպ պայմանագիր կնքելիս: Բոլոր դեպքերում, եթե նույնիսկ ընկերությունը այդ գործարքի կնքման արդյունքում ստանա ոչ պակաս կամ նույնիսկ ավելի մեծ շահույթ, ապա միևնույն է, համապատասխան սուբյեկտի կողմից որպես կաշառքի առարկա ստացվող գույքային բարիքը ուղղված է ոչ թե տվյալ կազմակերպության, այլ կաշառվողի անձնական կարիքների բավարարմանը, ուստի կազմակերպությունը կաշառքի առարկայից, որպես կանոն որևէ օգուտ ձեռք չի բերում: Ընդ որում, նույնիսկ եթե ապօրինաբար ստացվող օգուտը նախատեսվում է հենց այն կազմակերպության համար, որտեղ աշխատում է կաշառվողը, ինչը, մեր կարծիքով, չի բացառվում (որպես օրինակ կարելի է պատկերացնել այնպիսի իրավիճակ, երբ բանկի կառավարիչը որևէ անձի վարկ տրամադրելու նպատակով, որպես վարկի տրամադրման պարտադիր պայման, վերջինից պահանջում է ոչ համարժեք գնով բանկին վաճառել տվյալ անձին պատկանող ավտոմեքենան կամ այլ գույքը, կամ երբ կազմակերպության ղեկավարը խոստանում է աշխատանքի ընդունել տվյալ կազմակերպության պարտատիրոջը կամ նրա մեծավորին վերոհիշյալ պարտքը ներելու դիմաց փոխարենը պահանջելով հրաժարվել պարտքը ստանալուց), ինչպես նաև այլ դեպքերում, երբ տվյալ կազմակերպությունը որոշակի օգուտ է ստանում, օրինակ, կաշառման արդյունքում կնքված գործարքից ստացված շահույթի տեսքով, ապա նման արարքները չեն դադարում հանրության համար վտանգավոր լինելուց:

Միևնույն է, դրանք ունենալու են կազմակերպության շահերի դեմ՝ խախտելով դրա գործունեության իրականացման սահմանված կարգն ապահովող հասարակական հարաբերությունները, հետևաբար միշտ կատարվում են ի վնաս այդ կազմակերպության:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ գույքային օգուտ ստանալու (տալու) ապօրինության հատկանիշը կայանում է նրանում, որ դա հիմնված չէ որևէ իրավական նորմի կամ դրան համապատասխան մշակված կազմակերպության հիմնադիր փաստաթղթի, ներքին իրավական ակտի կամ կնքված պայմանագրի վրա, այսինքն՝ չի բխում (ուղղակիորեն արգելված է կամ նախատեսված չէ) օրենքի, այլ նորմատիվ-իրավական ակտերի, կազմակերպության հիմնա-

դիր փաստաթղթերի, ներքին իրավական ակտերի պահանջներից, քաղաքացիաիրավական կամ աշխատանքային պայմանագրի դրույթներից կամ տվյալ կազմակերպության (ինստիտուտի) գործունեության սկզբունքներից և խնդիրներից, գործունեության իրականացման կարգից, այդպիսի օգուտ տրամադրողի և ստացողի հարաբերությունների կամ տվյալ կազմակերպության և համապատասխան ծառայողի միջև իրավահարաբերությունների բնույթից, և հանդիսանում է ծառայողի գործողությունը կամ անգործությունը պայմանավորող հանգամանք:

¹ Տե՛ս Կомментарий к Уголовному кодексу Российской Федерации. Расширенный уголовно-правовой анализ. Под общ. ред. Мозякова В.В. М.: Экзамен, 2002, С. 464. Կомментарий к Уголовному кодексу Российской Федерации. Отв. ред. Радченко В.И. -М., Вердикт, 1996, С. 350.

² Տե՛ս Կомментарий к УК РФ. Особенная часть. Под ред. Скуратова Ю.И. и Лебедева В.М. -М., 2000, С. 494.

³ Տե՛ս Կомментарий к Уголовному кодексу Российской Федерации. Особенная часть. Отв. ред. Радченко В.И.-М., Вердикт, 1996, С. 350.

⁴ Տե՛ս Документы Верховного суда Российской Федерации. Бюллетень Верховного суда Российской Федерации. Бюллетень N 6 2000 года. <http://www.suprcourt.ru/second.php>

⁵ Տե՛ս Уголовный кодекс Российской Федерации. Расширенный уголовно-правовой анализ/ Под общ. ред. Мозякова В.В. -М.: Экзамен, 2002, С. 465.

⁶ Տե՛ս Կомментарий к Уголовному кодексу Российской Федерации. Особенная часть. Отв. ред. Бойко А.И. Ростов-на-Дону, 1996, С. 439.

⁷ Տե՛ս Квициния А.К. Взятничество и борьба с ним, 1990, Харьков, С. 68.

⁸ Տե՛ս Горбунов А.В. Уголовно-правовая характеристика подкупа. Челябинск, 2000, С. 50. Тумаркина Л.П. Уголовная ответственность за коммерческий подкуп. М, 2007, С. 68.

⁹ Տե՛ս Կомментарий к УК РФ. Особенная часть. Отв. ред. Радченко В.И. -М., Вердикт, 1996, С. 350.

¹⁰ Տե՛ս Уголовный кодекс Российской Федерации. Расширенный уголовно-правовой анализ. Под общ. ред. Мозякова В.В. -М.: Экзамен, 2002, С. 465.

РЕЗЮМЕ

Незаконность как обязательный признак объективной стороны коммерческого подкупа

В настоящей статье рассматривается признак незаконности, характеризующий объективную сторону коммерческого подкупа. В статье описываются и анализируются условия, исключающие правомерность дачи и получения благ, составляющих предмет коммерческого подкупа, на основании чего раскрывается сущность незаконного характера дачи и получения соответствующих выгод субъектами данного общественно опасного деяния. Статья содержит анализ сложившихся в теории уголовного права мнений и позиций, высказанных разными авторами относительно данного вопроса. В статье затрагиваются также вопросы совершенствования законодательного определения признаков объективной стороны коммерческого подкупа.

SUMMARY

Illegitimacy as obligatory sign of objective party of commercial bribery

This article deals with the sign of illegitimacy that characterized objective party of commercial bribery. The article describes and analyzes conditions that exclude legitimacy of giving and receiving goods that make up the subject of commercial bribery, on the basis of which is discovered the essence of illegal character of giving and receiving corresponding advantage by subjects of that anti-socially dangerous act. This article contains analysis of prevailing in theory of criminal law views and positions, expressed by different authors on this issue. The article also addressed the issues of improvement the legislative definition of the signes of objective party of commercial bribery.